

Վ. ՈՒՐԻՇՅԱՆ. Մեր արմատները նոր լույսի տակ, Հ. Ա, Ա-Կ, Ֆրեզնո, 1995, էջ 183+(698-687), Հ. Բ, Հ-Ֆ, Ֆրեզնո, 1998, էջ 245+(635-623):

Երկհատոր այս գիրքը հեղինակի տասնհինգ տարիների տքնության արգասիքն է, որ հանձնված է մասնագետների դատին: Հեղինակի կարծիքով այն պիտի հեղաշրջում կատարի Հայերենագիտության մեջ: Գիտության անձանդի այս անձնավորությունը մարտահրավեր է նետում ոչ միայն Հայերենագիտությանը, նրա պատմությանը, այլև լեզվաբանության ընդհանրապես: Իսկ ի՞նչ կովաններ են հիմք տալիս նրան՝ Վ. Ուրիշյանին, առճակատման գնալ շուրջ երկուհարյուրամյա լեզվաբանության նվաճումների դեմ, որոնց շնորհիվ մարդկությունն այսօր դասակարգել է լեզուներն ըստ իրենց ծագումնաբանության (ըստ լեզվաբանության) տալով այդ լեզուների բառապաշարի շերտերը, բացել է ժողովուրդների կազմավորման պատմության անհայտ էջերը:

Մրցասպարեզ մտնելուց առաջ մարդիկները երկար նախապատրաստվում են, մինչդեռ Վ. Ուրիշյանը անտեսում է լեզվաբանական տարրական օրենքներն անդամ: Ի՞նչ փաստարկների վրա է կառուցել նա իր նոր տեսությունը:

Դրանք երկուսն են՝ փորձել Հայերենի անհայտ ծագում ունեցող և սխալ ստուգաբանված բառերի արմատները մեկնաբանել արաբերեն բառերով և ընդհանրապես Հայերենի 10, 996 արմատները նույնպես անխտիր բխեցնել արաբերենից մերժելով Հայերենի հնդեվրոպական լեզվաբանության փաստը: Իսկ ինչո՞ւ քանզի հնդեվրոպական լեզվաբանության շենքը՝ որովհետև եթե աֆրիկյան մայրցամաքից՝ մարդկության ամենահին բնօրրանից են սեմական ժողովուրդները եկել Ասիա, ապա Հայերի նախահայրերը նույնպես պիտի սեմիտներ եղած լինեին կամ ավելի սուույ՞ արաբներ: Ինչու արաբներ՝ որովհետև Ուրիշյանը գերազանց ղի-

տե արաբներն: Իրավացիորեն նա իրեն համարում է մի նոր Կոպեռնիկոս Հայերենագիտության և լեզվաբանության ասպարեզում «ոռւմբի նման պայթող գյուտով», «Ջանազան պատճառներով անընդունելի գտնող գանգված մը պիտի ունենամ դեմս, ինչպես Կոպեռնիկոս», – շեշտում է նա (Հ. Ա, էջ 18): Իսկ ինչպե՞ս վարվել Հայերենի բառազանձում առկա, Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ ցեղերի ու ժողովուրդների լեզուներից եկած բառերի հետ. ինչպե՞ս մերժել կամ հերքել դրանց գոյության փաստը, երբ աշխարհում չկա ոչ մի լեզու, որի բառապաշարը միայն մեկ լեզվի արմատներից բաղկացած լինի: Ըստ Ուրիշյանի կա և այդպիսի ստերիլ լեզու, որը Հայերենն է:

Իհարկե, Հայերենի բառազանձում առկա են արաբերենից և մյուս սեմականներից վերցված հարյուրավոր, գուցե և հազարավոր բառեր, որոնց մասին Ուրիշյանից առաջ գրել են շատ լեզվաբաններ: Նա առաջինը չէ այս իրողությունը նկատողը. այս մասին գրել են Հ. Հյուբշմանը, Հ. Աճառյանը, Ն. Մկրտչյանը, Հ. Մոմճյանը և այլք: Միայն արաբերենից փոխառյալ բառերի քանակը Հայերենում անցնում է 800-ից: Իսկ չէ՞ որ Հայերենը փոխ է առել բառեր նաև մյուս սեմականներից՝ աքքադացիներից, արամեացիներից, ասուրա-բաբելացիներից, ասորիներից, եբրայացիներից և հուսկ վերջում արաբներից:

Սեմական մյուս լեզուներից, հատկապես աքքադերենից Հայերենի կատարած փոխառությունների մասին գրել են Ն. Ադոնցը, Գ. Ղափանցյանը, Գ. Ջահուկյանը, Ն. Մկրտչյանը և այլք¹: Սակայն Վ. Ուրիշ-

1 H. H ü b s c h m a n n. Die semitischen Lehnwörter im Armenischen – ZDMG, 1892, S. 226-228. Նույնը Հայերեն՝ Վիեննա, 1894, Արաբական փոխառյալ բա-

յանը շրջանցում է այս հեղինակներին կամ անտեղյակ է նրանց աշխատանքներին, որոնք (թերևս դա է ճիշտը) խանդարում են նրա ֆիքս իդեալին՝ սևեռուն գաղափարին:

Իհարկե, Հայերեն մատենագրության մեջ մինչև այժմ մատնանշված արաբերեն այդ 800-ից ավելի բառերից գատ կարող են լինել դարձյալ մի քանի հարյուր արաբերեն, սակայն Ուրիշյանի կարծիքով Հայերենի ամբողջ բառապաշարը լրիվ, առանց բացառությունների, բաղկացած է արաբերեն բառերից: Ավելին՝ Հայերը ոչ թե խոսել են Հայերեն, այլ միայն արաբերեն են խոսել ի սկզբանե անտի: Այստեղ նա մոռանում է շատ կարևոր մի բան. եթե Հայերը խոսել են արաբերեն, ապա այդ լեզվի քերականությունն էլ պիտի լիներ արաբերեն և ոչ թե աղբյուրներ ունենար Հնդեվրոպական մյուս լեզուների հետ: Աշխարհի տարբեր լեզուների պատմությունը ցույց է տալիս, որ որևէ լեզու հարևան լեզուներից կարող է անսահմանափակ քանակով փոխառություններ կատարել և մնալ ինքր, չձուլվել այն լեզվին, որից հազարավոր բառեր է վերցրել: Սակայն, եթե նրա քերականությունն էլ է փոխվում, արդեն այդ լեզուն ինքը չէ: Կան արժեքներ և ճշմարտություններ, որոնց հետ մենք ստիպված ենք հաշվի նստել: Նմանապես յուրաքանչյուր լեզվի ենթաշերտի (substratum) և մակաշերտի (superstratum) գոյությունը անփոփոխելի է, ինչի մասին ոչինչ չկա Վ. Ուրիշյանի գրքում:

Նրան համարձակություն տվողը այն սենսացիոն հաղորդումներն էին, թե Աֆրիկայում է եղել մարդկային ցեղի ամենահին բնօրրանը: «Կյանքը, ավելի քան ուրիշ տեղ, սկսած էր Աֆրիկեի մեջ, — գրում է նա «Հառաջաբանում», — բնական էր եզրակացնել ուրեմն, թե բանավոր կամ խոսող

ներ Հայերենին մեջ: Հ. Ա. ճ ա ո յ ա ն. Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս. Երևան, 1952, էջ 169-217: Ն. Մ կ ր տ չ յ ա ն. Արաբական փոխառություններ Հայերենում մինչև արաբների արշավանքը Հայաստան. — «Լրաբեր Հաս. գիտ.», 1980, N 3, էջ 49-64: «Լրաբեր Հաս. գիտ.», 1984, N 2, էջ 72-82: «Լրաբեր Հաս. գիտ.», 1987, N 10, էջ 54-60: Հ. Մ ո ս ճ յ ա ն. Հայ լեզուն արաբ բերնին մեջ և հակառակը. Պեյթուսթ, 1960:

ցեղ մը Աֆրիկեյն եկած պետք է ըլլար այնտեղ, որ կարենար շրջանցել և տարածել խոսակցական լեզու մը, որուն շարք մը հիմնական բառերը իր հետ միասին բերած էր»: Այնուհետև՝ «մեր լեզվին ընդհանուր բառացուցակը, որ Արմատականը ունի, իր չախչախիչ մեծամասնությամբ առնված է արաբերենին»: Իր աշխատության հիմնաքարը դարձնելով աֆրիկյան քաղաքակրթության ամենահինը լինելու վարկածը, ինչպես նաև Գոռնելի Համալսարանի պրոֆ. Մարտին Պեռնայի (իմա՝ Բեռնայ) քառահատոր «Black Athena» աշխատությունը, ուր հիշյալ հեղինակը այն միտքն է հայտնում, որ հունարեն բառերուն գեթ կեսը առնված է սեմականեն կամ եղիպտականեն (Հառաջաբան):

Այսինքն՝ նա տրամաբանում է այսպես՝ եթե երկու Հնդեվրոպական լեզուներում Հայերենում և հունարենում առկա են սեմական բառեր, ապա դրանք արդյունք են աֆրիկյան մայրցամաքից եկած արաբախոս ցեղերի լեզվի ազդեցության:

Ուրիշյանի կազմած բառարանի արժեքը գրալիտերեն կարող էր բարձրանալ, եթե նա ճշգրտեր, թե Հայերենի փոխառությունները հատկապես որ սեմական լեզվից են գալիս: Աքքադերենին ծանոթ չլինելը Հանդեցնում է սխալ եզրակացությունների: Ակնհայտորեն աքքադերենից եկող բառերը բխեցնում է արաբերենից. բերենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը:

Ուղիղ 20 տարի առաջ՝ 1979 թ. մենք մատնանշել ենք բազմաթիվ աքքադա-հայ գուգահեռներ, որոնց թվում նաև անանուխ բուսանունը: Աքքադերենում ունի նույն հնչումն ու նշանակությունը՝ ananihu², Ուրիշյանը, անտեղյակ այս հոդվածին, փորձում է բխեցնել արաբերենի աննաընարը («նանա»)-ից՝ գարմանալով. «Ինչո՞ւ անանուխ կամ անաղնուղ կամ անանա չէ եղած տառադարձության ատեն (Հ. Ա., էջ 14):

Աքքադերենի tamgar «վաճառական»-ից է Հայերենի թանդարը, մինչդեռ Ուրիշյանը ավելի հեռու թուկար, թակեր,

2 Древний Восток, N 4, с. 25, Ереван, 1983.

թուկկար, թիկարա «վաճառականություն» ձևերից է ենթադրում (Հ. Ա, էջ 100), որոնցից չէինք ունենա թանգար: Ավելի ստույգ այդ բառը արաբերենում հնչում է թիլջար³:

Հայերենի կնիք, կնունք բառերի աքթադերենի kaniku, kunukk «կնիք» բառից լինելը վաղուց է մատնանշվել, մինչդեռ փաստերի դեմ աչք փակելը նրան տանում է արաբերենի մի բառի մոտ՝ ըանիք, ըանաք «փակել, բոլոր ճամփաները գոցել», որը ոչ իմաստով և ոչ էլ հնչմամբ չի նույնանում:

Հայերենի գագաթ-ը վաղուց է նույնացվել աքթադերենի gaggadu նույնիմաստ բառի հետ⁴. Սակայն հայերենի արաբերենից սերվելու մարմաջը ստիպում է նրան արհամաքել նախորդների ճիշտ կռահումները՝ Հօդուտ արաբերենի ըակկ, ըակկաթ «բարձրանալ (ձայն, հոտ, փոշի), բարձրություն, քագաթ, նման բարձրացումի» սխալ զուգահեռի (Հ. Բ, էջ 52):

Նմանապես սխալ է հայերեն խոսք-ը արաբերենի խասս-ից բխեցնելը, երբ կա աքթադերենի hussu? իմաստով և արտասանությամբ նույն բառը:

Նշենք Ուրիշյանի կողմից խեթա-հայ զուգահեռներն անտեսելու մի քանի օրինակ: Մասնադեպերի կողմից վաղուց ընդունված է հայերեն իշխան-խեթերեն isha նույնիմաստ զուգահեռների գոյություն փաստը, մինչդեռ նա հակված է դարձյալ արաբերենի կողմը և գտնում է սագ, հասուգ, սահագան «վարեց կվարէ վարել (հոտ, կառք, բանակ, ժողովուրդ)» իմաստով և հնչմամբ շատ հեռու ձևեր (Հ. Ա, էջ 115): Եվ այսպես, բազմաթիվ խեթա-հայկական զուգահեռներ, ինչպես՝ բրուտ «կավ»-խեթ. purut նա մկրտում է արաբերեն, թեև դրանք վաղուց հրապարակված, են նաև գերմաներեն և հայերեն⁵ «Ո՞րու հոդ»:

3 X. K. Б а р а н о в. Арабско-русский словарь. М. 1977, с. 99.

4 Հ. Ա ճ ա ո յ ա ն. Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ). Հ. 1, Երևան, էջ 466:

5 N. M k r t s c h j a n. Neue Hethitisch-Armenische lexikalische parallelen.— Acta Antiqua Academiae scientiarum

Ուրիշյանը այն բխեցնում է արաբերենի մարաս «արմավը կամ կավը ջուրին մեջ թաթախել կակուզնալու համար» բառից (Հ. Ա, էջ 51): Գոնե այս անգամ թող թույլ տրվի հարցնել ի՞նչ կապ կարող է լինել կավի և թրջվելու միջև:

Հայերենի սար «բուրդ» բառը նույնպես վաղուց նույնացվել է խեթ. asara «բուրդ» բառի հետ Գ. Ղափանցյանի կողմից⁶: Սակայն Ուրիշյանը, ինչպես միշտ, ուրիշ հնչյունական անցումներ է մատնանշում «Հարմարեցնելով» արաբերենի ասուֆ-ը հետևյալ պատճառաբանությամբ. «Անշուշտ հետևեցնելը հեշտ է, թե հայերեն ֆ գիրը շատ ուշ գալու է համար ցավով զեղչված է: Բ-ն, ինչպես կտեսնվի, աճական է և ամեն տեղ չկա» (Հ. Ա, էջ 28):

Վ. Ուրիշյանի «թեթև» ձեռքով մերժվում են հայերենի իրանական փոխառությունները և, որ ամենակարևորն է՝ հայերենի բուն հնդեվրոպական ծագում ունեցող բառերն էլ. թվենք դրանցից մի քանիսը՝ կին, սար, դմակ, դեմ(ք), և այլն: Օրինակ՝ իրանական ծագում ունեցող դմակ-ը նա կապում է արաբերենի դամաղ «ուղեղը դուրս բերել» բառին (Հ. Ա, էջ 72): Զարմանք է հարուցում նման «ստուգաբանությունը», մանավանդ, որ այդ բառը առկա է գրեթե բոլոր իրանական լեզուներում: Հայերեն սար «գլուխ, բարձունք» բառը մեկ ենթադրում է արաբ. ասուրիթ-ից, որից «որպես թե հոգնակի կարծվելով դեն է նետվել վերջին -աթ-ը» (Հ. Ա, էջ 28, տես ասուրիթ բառի տակ), մեկ այլ տեղում բխեցնում է սար, սուր «բարձրանալ, պարիսպ» բառից (Հ. Բ, էջ 163):

Ուրիշյանը չունի միասնական մոտեցում և միասնական հնչյունական օրենքներ: Ամեն բառի համար հորինում է պատճառաբանություններ և իր իսկ սահմանած հնչյունական անցումներից միշտ շեղվող օրինակներ: Այս է պատճառը, որ նրա բանալի-ում մեկ արաբերեն հնչյունի (հնչյունի) դիմաց հայերենում մինչև 8 հնչյուններ են դրված (օրինակ արաբերենի

Hungaricae, T. XXII, Fasc. 1-4, Budapest, 1974, S. 316-317.

6 Գ. Ղ ա փ ա ն ջ յ ա ն. Հայոց լեզվի պատմություն. Երևան, 1961, էջ 166:

1-ի դիմաց վեց հնչյուն՝ թէ, տ, թ, դ, գ, ճ, իսկ 1-ի դիմաց՝ ութ, ց, ձ, ծ, չ, գ, ժ, չ, ճ և այսպես շարունակ: Որևէ Հայերեն բառ նա տեսականորեն կարող է ենթադրել արաբերենի որ բառից էլ ցանկանա: Իսկ եթե իր մատնանշած Հայերեն բառը իմաստով կամ հնչյունական անցումներով չի համապատասխանում արաբերենին, այս դեպքում կոչ է անում «Քաջաբար ընդունել պետք է, թե բառը արաբերեն է» (Հ. Ա. էջ 52, գաբ ըստի տակ): Բայց հենց այդպիսի «քաջությունից» է, որ լեզվաբանը պիտի հեռու մնա:

Ոչ մի կասկած չի կարող լինել, որ Հ. Աճառյանի ՀԱԲ-ը կարող է ինչ-ինչ թերություններ ունենալ: Այն ավարտվելուց հետո անցել է 30-40 տարի և ներկայումս հրատարակվել են հազարավոր աքթադերեն, խեթերեն, խուռոիրեն սեպագիր արձանագրություններ, որոնց շնորհիվ ճշտվում են կամ մերժվում ՀԱԲ-ի արմատները կամ մեկնաբանվում են նորովի: Ծիշա է, տեղին է նաև Վ. Ուրիշյանի քննադատությունը Հ. Աճառյանի հասցեին, որ արաբերենին լավ չտիրապետելու պատճառով օգտվել է Կամուսի թուրքերեն թարգմանությունից: Իրավացիորեն նա մերժում է Հ. Աճառյանի այն կարծիքը, որ V դարում արաբական փոխառություններ չէին կարող լինել: Սակայն այս եզրակացությունը ոչ թե Հ. Աճառյանին է, այլ Հ. Հյուբերմանին, որին Աճառյանը շատ է վստահում: Այդ Հայտարարությունը մենք հերքել ենք դեռևս 20 տարի առաջ, մեր մի հոդվածում⁷:

Ուրիշյանը արաբերենից ունեցած իր դիտելիքները կարող էր ի սպաս դնել կասկածելի ծագմամբ բառերի մեջ արաբերենը որոնելով և ոչ թե արդեն Հայտնի, ստուգաբանված հնդեվրոպական, իրանական, աքթադական, խեթական բառերը բռնի արաբերեն դարձնելով:

Միշտ կրկնելով իր աշխատանքում արաբերենի մայր լեզու կամ նախալեզու լինելու ֆիքս-իրեան, նա խառնում է սեմականների հետ Հայերենի մերձեցումների

ժամանակագրությունը, որով մեղանչում է նաև պատմության առջև: Ձէ՛ որ աքթադական արձանագրություններում արաբները հիշատակվում են որպես անապատային ցեղեր, որոնք գուրկ էին դրից ու գրականությունից: Հայերը անրնդհատ եղել են սեմականների հետ շփման մեջ, որի պատճառով մեծ է Հայերենի սեմական նստվածքը: Հստակ հնչյունական օրենքները միայն կարող են պարզել, թե որ սեմական բառերը և ումից ենք մենք վերցրել: այստեղ սայթաքման վտանգը շատ մեծ է և այդ նստվածքի հարցը միայն արաբերենով չի կարող լուծվել: Մինչդեռ պ-ըն Ուրիշյանը «ապագա ամբողջական Արմատական մը նոր լույսի տակ ունենալու» (Հառաջաբան) նպատակով հարցը ցանկանում է լուծել միայն արաբերենի միջոցով և նույնիսկ այնքան է համոզված, որ բացական է «Այո, արաբերենն փոխ չենք առած, մենք արաբերեն խոսած ենք... Մենք պետք է արաբերեն խոսած ըլլանք, որ Արարատ, Մասիս, Երասիս, Եփրատ, Արագած, Հրեբունի (ոչ Երևան), Վարդան, Անակ անունները դրած ըլլանք» (Հ. Ա. էջ 28):

Առանց ժամանակագրության պատմություն գոյություն չունի, սակայն նա չի հարգում այդ տարրական պահանջը և սահման չի դնում արաբերենի և սեմական մյուս լեզուների միջև՝ միշտ նախապատվություն տալով արաբերենին: Նա դրում է. «Հայկի Հայաստան գալեն հետո, եթե այս անունները դրված են, ուրեմն կարելի է հետևեցնել, որ այդ ցեղախմբին խոսած լեզուն սեմական էր և արաբերեն» (Հ. Ա. էջ 28-29): Բայց չէ՛ որ Հայկը Բաբելոնից էր, ինչո՞ւ պիտի նրա խոսած լեզուն բաբելոնները չլիներ: Եվ այսպես, փաստերը շատ են ոչ հօգուտ հեղինակի:

Ավարտելով մեր խոսքը Վ. Ուրիշյանի աշխատանքի վերաբերյալ, հարց տանք. «Արդյո՞ք ամբողջապես խոտելի է նրա գիրքը: Ինքը քաջություն ունեցել է խոստովանելու, որ անթերի գործ մը տված ըլլալու հավակնությունը կարենալ ունենալու համար պետք էր խմբագրական կազմ մը» (Հառաջաբան): Ծիշտ է նկատում, որ գիրքը տպագրվելուց առաջ պետք է քննարկվեր և խմբագրվեր: Սակայն արդեն

7 Ն. Ա. Մ Կ ր տ չ յ ա ն. Արաբերեն փոխառություններ հայերենում մինչև արաբների արշավանքը Հայաստան. «Հրաբեր Հաս. գիտ.», 1980, № 3, էջ 49-64:

ուչ է: Ցավոք, նման բան չի կատարված և որոշ մարդիկ կարող են օգտվել նրա գրքից, որ լի է սխալներով (ինչպես ինքն է օգտվել Աֆրիկյան մարդկության բնօրրան համարողների դրածներին) և շրջանառության մեջ կարող են դրվել ոչ գիտական եզրակացություններ: Սակայն պետք է հաշվի առնել, որ հեղինակը, ազնիվ մղումներով, շուրջ 15 տարի աշխատել է այս գրքի վրա՝ Հայերենագիտության իր գիտելիքներն ի սպաս դնելու ցանկությամբ, և որ սխալների հետ միասին գրքում կան նաև մի շարք ճիշտ ստուգաբանություններ, որոնք նորովի կարող են լուսաբանել հատկապես անվավեր, չստուգաբանված, մեր մատենագրության մեջ ոչ ճիշտ տառադարձված բառեր: Բերենք նման ճիշտ ստուգաբանված, բառերից մի քանիսը. հազալ, հազել, հազ - արաբ. հատալ (իմա՝ հադալ) «կոկորդի կծկում», հազզ, հազզա «կոկորդի և կուրծքի քերվըտուք» (Հ. Բ, էջ 3):

Հագագ «չունչ, ձայն արտաբերող շունչ, շնչափող» (Թրակացի, Քերակ.)- արաբ. հագաը, հաճաը (իմա՝ հաջաը) «կոկորդի, հեզել, նաև ուտել» (Հ. Բ, էջ 3):

Շատ արժեքավոր է նրա կատարած լրացումը սաղմոս բառի տակ, որը չունի Հ. Աճառյանը. նա իրավացիորեն սաղմոսը սալամ «բարև, խաղաղություն» արաբերեն բառից է բխեցնում (Հ. Բ, էջ 160): Այստեղ, սակայն, մի «փոքրիկ» ուղղում է պետք. արաբերեն բառը պետք է գարձնել եբրայերեն կամ սեմիտերեն, որովհետև այն վկայված է արդեն Հին կտակարանում, արաբների ասպարեզ գալուց շատ առաջ:

Ճիշտ է թվում նաև Ուրիշյանի ստուգաբանությունը դալակիլ բառի դեպքում, որ ՀԱԲ-ում չի ստուգաբանված: Հայերենում դալակիլ «աշխատիլ, դատիլ, ճգնիլ»- արաբերենում՝ դալակ «աշխատանք» (Հ. Ա, էջ 65): Սակայն նրա ոչ բոլոր արաբիզմներին կարելի է վստահել: Այսպես, շատ խախուտ է հետևյալ ստուգաբանությունը՝ ինարիսի (նավի, դուան, սյան և այլն), ՀԱԲ-ում չի ստուգաբանված: Ուրիշյանն առաջարկում է իմաստով մոտ արաբերեն ըստ «կապ», ըստ «տեղին մեջ մնալ, ամրանալ» (ընդ արմատից, Հ. Ա, էջ 130): Սակայն անբացատրելի է թողնում

Հայերենում իա-ի հավելումը ընդ-ից առաջ (ինարիսի-ինարիսիս): Բայց ի՞նչ է իա-ն:

Նման շինծու ստուգաբանությունները, այլոց ստուգաբանություններին անտեղյակ լինելը և այլ սայթաքումները որքան էլ բազմաթիվ են, այնուամենայնիվ, թվում է՝ թացը չորից անջատելուց հետո, կմնան զգալի թվով ճիշտ ստուգաբանություններ իսկական արաբերենի բառապաշարից. հենց գրանք էլ կլինեն Ուրիշյանի ներդրումները հայերենագիտության ասպարեզում: Եթե նա կարողանար հիմնավորել, թե ի՞նչ պատճառներով է արաբերեն միևնույն Հնչյունը Հայերենում արտացոլվում տարբեր մեկից ավելի, նույնիսկ 7-8 Հնչյունների ձևով, դա կլիներ իսկապես գիտություն և ոչ սիրողական մարզանք: Օրինակ, Հայերենում եվրոպական բարոն բառը հանգիպում է և՛ բարոն, և՛ պարոն ձևով: Լեզվաբաններն ասում են, որ պարոնը կիլիկյան բարբառի Հնչմամբ է, իսկ բարոնը՝ նոր դրական: Ինչո՞ւ Հայերեն պաշտպան և փուշտիպան, բանտ և բանդ կրկնակներ կան: Որովհետև առաջինները պահպանվեցին են փոխառյալ, երկրորդները՝ սասանյան, միջինպարսկական շրջանից: Քանի որ փոխառությունները մեկ օրում կամ մեկ տարում չեն վերցվում, այլ բազում տարիների և դարերի, ուստի պետք է տարբերակվեն վաղ արաբական փոխառությունները ուշ արաբականներից, միջնորդավորվածները (թուրքերենի և պարսկերենի միջոցով)՝ ուղղակի վերցվածներից: Ահա այստեղ է, որ ի հայտ են գալիս Հնչյունական օրինաչափություններն ու օրենքները, ինչը բացակայում է այս գրքում:

Ներկա վիճակով գիրքը կարող է ծառայել որպես նյութերի ժողովածու, մանավանդ արաբական փոխառությունները ՀԱԲ-ում ճշգրտելու և մյուս փոխառություններից զատելու տեսանկյունից: Որքան էլ շատ են մեր լեզվաբանական գիտողությունները Վարդգես Ուրիշյանի պատկառելի ծավալ ու կշիռ ունեցող երկհատոր բառարանի վերաբերյալ, պետք է տեսնել հեղինակի և իր բառարանի արժանիքները նույնպես: Ամենից առաջ արաբերենի ան-

թերի իմացությունը, որի հետ քչերը կարող են մրցել թե՛ Սփյուռքում և թե՛ Հայրենիքում: Նա քաջ գիտի ոչ միայն արաբերենը, այլև այդ լեզվի բարրառային տարբերությունները: Հեղինակը ինքնուրույն կերպով, առանց լեզվաբանական հիմնավոր կրթություն և ստանալու, կարողացել է հաղթահարել մասնագիտական շատ բարդություններ և դժվարություններ: Միայն թե պետք էր իմանալ, որ բոլոր բառերը չեն, որ կարող են մի լեզվից մյուսը անցնել. ասենք՝ դերանունները, թվականները, մարմնի մասերի անվանումները, ազգակցական-բարեկամական կապերի անվանումները (մայր, հայր, քույր, եղբայր և այլն): Այսուհանդերձ, Ուրիշյանի բառարանը հայ լեզվաբաններին

օգտակար կարող է լինել հենց արաբերեն բառերի ստույգ թարգմանություններով, որոնք բառարանում քիչ չեն: Դա է, որ արժեք է տալիս հեղինակից շատ տարիներ և ջանքեր խլած այս աշխատությանը:

Մեղ հիացմունք են պատճառում Սփյուռքի այն մտավորականները, որոնք ջանք, եռանդ, ժամանակ չեն խնայում հայագիտությանը, տվյալ դեպքում լեզվագիտությանը, անշահախնդիր ծառայություն մատուցելու համար:

Վարդգես Ուրիշյանն այդ երախտավորներից է:

ՆԵՐՍԵՍ ՄԿՐՏՁՅԱՆ